

**ՄԻ ԴՐՎԱԳ ԼԵՎՈՆ ՄԵԾԱԳՈՐԾԻ ԵՎ
ՆԵՐՍԵՍ ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**

Նեյի Ժամկոչյան

Հայոց եկեղեցին միշտ կանգնած է եղել պետության կողքին և ավելին՝ Հայ Առաքելական Եկեղեցին դարեր ի վեր հայոց պետականության բացակայության պայմաններում եղել է ժողովրդի գոյատևման, հոգևոր կենսունակության ազդեցիկ կռվան: Մեր եկեղեցու պատմության համար հատկապես կարևոր է 12-13-րդ դարերի պատմության ուսումնասիրությունը և մասնավորապես պետության և եկեղեցու փոխհարաբերությունների պատմությունը: Ինչպես գիտենք 12-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսերից Կիլիկյան Հայաստանը ղեկավարում էր Լևոն Մեծագործը, ում ղեկավարման տարիներին ասպարեզ իջան մի խումբ անվանի հոգևորականներ, որոնց մեջ իր գիտելիքներով և տաղանդով փայլում էր Ներսես Լամբրոնացին: Պատմագիտության տեսանկյունից շատ հետաքրքիր է քննարկել Լևոն Մեծագործի և Ներսես Լամբրոնացու հարաբերությունների պատմությունը:

Հայտնի է, որ Ներսես Լամբրոնացին դեռևս 23 տարեկան հասակում դարձել է եպիսկոպոս, ինչը շատ քչերին էր հաջողվել, իսկ 1175-ին կարգվել է Տարսոն նահանգի արքեպիսկոպոս: Կյանքի վերջին տարիներին պաշտոնավարել է Լևոն Մեծագործի արքունիքում՝ որպես ատենադպիր, պալատական խորհրդատու և թարգմանիչ: Վերջինս սկսեց ակտիվ դերակատարում ունենալ Կիլիկյան Հայաստանի հոգևոր կյանքին և քաղաքական անցուդարձերին: Բազմիցս ուղարկվել է օտար երկրներ, կարգավորելու պետության արտաքին գործերը: Իր մտավոր ու ճարտասանական կարողությամբ վաստակել է հմուտ հրապարակախոսի համբավ: Հավանաբար դա էր պատճառը, որ հաճախ Լևոն Մեծագործը օգտվում էր այս անվանի հոգևորականի ծառայություններից: Հայտնի է նաև, որ 1180-ական թթ. վերջերին և 1190-ական թթ. սկզբներին Լևոնը արդեն Կիլիկիայի ներսում ճանաչված միապետ էր և մնացել էր նրա միջազգային ճանաչման խնդիրը:

Այսպես, երբ 1193 թ. մահացավ կաթողիկոս Գրիգոր Դ Տղան և ա-

ռաջ եկավ նոր կաթողիկոսի ընտրության հարցը, թեկնածուների մեջ էր նաև Ներսես Լամբրոնացին, որպես Կիլիկյան Հայաստանում մեծ հեղինակություն ունեցող հոգևորական, սակայն Լևոն Մեծագործը վճռեց այդ կարևոր և պատասխանատու պաշտոնը վստահել արևելյան վարդապետների թեկնածու՝ երիտասարդ Գրիգոր Ե Քարավեժին¹: Ինչպես նշում է Ն. Ակինյանը՝ Ներսես Լամբրոնացին դեմ է եղել Քարավեժի ընտրությանը², սակայն վերջինիս ընտրությամբ երկկողմ հարաբերություններում որևէ փոփոխություն չի եղել:

Կարծում ենք, որ Լևոն Մեծագործը նշյալ պահին ոչ թե չվստահեց Ներսես Լամբրոնացուն, այլ ցանկացավ իր կողմը գրավել նաև Արևելյան Հայաստանի հոգևորականներին: Թեև Գրիգոր Քարավեժը ընտրվեց հայոց կաթողիկոս, այնուամենայնիվ Լևոն Մեծագործի և Ներսես Լամբրոնացու հարաբերությունները ընթացան նորմալ հունով և վերջինս շարունակեց լուրջ դերակատարում ունենալ պետական-քաղաքական կյանքում: Գրիգոր Քարավեժի մահից հետո էլ կրկին առաջացավ հայոց կաթողիկոսի ընտրության խնդիրը, որտեղ կրկին Ներսես Լամբրոնացին թեկնածուների մեջ էր, սակայն այս անգամ Լևոն Մեծագործը այդ պաշտոնը չվստահեց ո՛չ Լամբրոնացուն, որին դեմ էին արևելյան վարդապետները և ո՛չ էլ վերջիններիս թեկնածուին՝ Բարսեղ Անեցուն:

Փաստորեն պետք է նշել, որ թեև Ներսես Լամբրոնացին բավական մտերմիկ հարաբերություններ ուներ Լևոն Մեծագործի հետ, մեծ դերակատարում ուներ պետական-քաղաքական կառավարման համակարգում, այնուամենայնիվ վերջինս չկարողացավ դառնալ հայոց կաթողիկոս:

Նշենք նաև, որ Լևոնը 1180-ական թվականների վերջերին և 1190-ական թվականների սկզբներին պաշտոնապես դեռ թագավոր չէր օժված, բայց իրականում, Շիկամորուսի Կիլիկիայի կողմերը գալուց և թագ խոստանալուց հետո հայերը նրան համարում էին իբրև թագավոր, ինչի մա-

¹ Տես **Ա. Հովհաննիսյան** «Պետության և եկեղեցու հարաբերությունները Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում», Տարեգիրք ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի, Դ, ԵՊՀ, Երևան, 2009, էջ 181-191:

² **Ն. Ակինյան**, Ներսես Լամբրոնացի, Արքեպիսկոպոս Տարսուհի, Կեսանքն եւ գրական վաստակները, հանդերձ ազգաբանութեամբ Պահլաւունեաց եւ Լամբրոնի Հեթմեաց, Վիեննա, 1956, էջ 66:

սին կան բազմաթիվ վկայություններ թե՛ Մխիթար Այրիվանեցու¹, թե՛ Ալիշանի² և թե՛ այլ աշխատություններում: Նշենք նաև, որ թե՛ Հռոմի պապական աթոռը և թե՛ բյուզանդացիները փորձում էին բավարարել իրենց եկեղեցաքաղաքական նկրտումները, այսինքն հայ եկեղեցուն ստիպել ճանաչելու իրենց եկեղեցիների առաջնորդների գերիշխանությունը և կատարել ծիսադավանաբանական համապատասխան զիջումներ: Ինչ վերաբերում է Լևոնի թագադրման շուրջ տարվող բանակցություններին, ապա պետք է նշել, որ դրանք վարելու համար անհրաժեշտություն առաջացավ կազմել պատվիրակություն և ուղարկել Եվրոպա և Բյուզանդական կայսրություն: Եվ ընդհանրապես Բյուզանդական կայսրությունը հայոց իշխանապետին առաջարկում էր թագ ստանալ Բյուզանդիայից և ոչ թե Հռոմեական Սրբազան կայսրությունից, որի հետ բանակցությունները սկսվել էին ավելի վաղ: Բյուզանդական կայսրը Լևոնին խորհուրդ էր տալիս կրել ոչ թե հռոմեական, այլ բյուզանդական թագը, քանի որ Կիլիկիայի իշխանապետությունը ավելի մոտ էր Բյուզանդիային: Բնական է, որ դրա դիմաց կայսրությունը հայերից որոշակի զիջումներ պետք է ակնկալեր: Եվ ահա դեպի Կոստանդնուպոլիս մեկնող պատվիրակությունը գլխավորեց հայոց իշխանապետի խորհրդական Ներսես Լամբրոնացին³:

Այս կարևոր առաքելության մասին մեզ մանրամասն տեղեկացնում է միջնադարյան պատմիչներից Սմբատ Սպարապետը, ով մասնավորապես նշվում է. «Կոստանդնուպոլսում հայկական պատվիրակությանը սիրալիր ընդունելություն ցուցաբերեցին, սակայն շուտով առաջ եկան հայ և հույն եկեղեցիների դավանաբանական խնդիրները, և Ներսես Լամբրոնացին ոչ մի զիջում չկատարեց և վերադարձավ Կիլիկիայի իշխանապետություն⁴: Մյուս պատմիչների մոտ վերը նշված դեպքի մասին տեղեկություններ չենք հանդիպում: Հետազոտողներից Գ. Հակոբյանն կարծիք է հայտնում, համաձայն որի հայոց իշխանապետը մտածված կերպով Ներսես Լամբրոնացուն նշանակեց պատվիրակության ղեկավար, քանզի

¹ Մխիթարայ Այրիվանեցիոյ Պատմութիւն Ժամանակագրական, Ս. Պետերբուրգ, 1867, էջ 80:

² Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 463:

³ Գ.Միքայելյան, Կիլիկիայի հայկական պետության պատմություն, Երևան, 2007, էջ 157:

⁴ Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 207:

վստահ էր, որ Կոստանդնուպոլսում լինելու է կրոնական վեճ և Լևոն Մեծագործը ցանկանում էր օգտագործել նրա գիտելիքները¹:

Մեզ հայտնի չէ, թե արդյոք Ներսես Լամբրոնացին մասնակցել է հայ-հռոմեական եկեղեցաքաղաքական բանակցություններին: Համենայն դեպս միջնադարյան պատմիչներն այդ մասին լռում են: Շուտով Կիլիկիա են գալիս Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչները և հայոց եկեղեցուց պահանջում ընդունելու կաթոլիկյան դավանանքի որոշ դրույթներ: Ու թեև սկզբնական շրջանում հայ հոգևորականությունը չի համաձայնվում, այնուամենայնիվ, երկրորդ ժողովում որոշում են զիջումներ կատարել, որպեսզի Լևոնին թագադրեն և այս որոշման մեջ որոշակի դերակատարում է ունեցել նաև Ներսես Լամբրոնացին: Դրան է վկայում նաև պատմիչներից Կիրակոս Գանձակեցին, ով նշում է, որ 12 ստորագրող եպիսկոպոսներից մեկն էլ Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացին էր: Եվ միայն դրանից հետո Հռոմի պապական աթոռի ներկայացուցիչները թագ շնորհեցին Լևոն Մեծագործին²:

Այսպես 1198 թ. հունվարի 6-ին Տարսոն քաղաքում Ներսես Լամբրոնացու ղեկավարությամբ կազմակերպվեց թագադրության հանդիսավոր արարողություն³ և Կիլիկիայի հայոց իշխանապետ Լևոն Բ Ռուբինյանը հռչակվեց Կիլիկիայի թագավոր, ինչը մեծ իրադարձություն էր ողջ հայության կյանքում:

Փաստորեն Լևոն Մեծագործը այս կարևոր առաքելությունը նույնպես վստահեց Ներսես Լամբրոնացուն:

Թագավորության հռչակումից հետո էլ, ըստ Գ. Հակոբյանի Կիլիկիայի պետության ներքին և արտաքին կյանքի հետ կապված շատ հարցեր արքունիքում առանց Լամբրոնացու չէր կատարվում, կրոնական-եկեղեցական որևէ լուրջ հարց կաթողիկոսարանը առանց Լամբրոնացու խորհրդի չէր լուծում: Նա արքունիքի և հայրապետական աթոռի խորհրդատուն էր, բոլոր պատգամավորությունների գլխավորողը, վստահելի անձը և կարող ուժը⁴: Նրան վստահված է եղել նաև երկրի արտաքին

¹ Գ. Հակոբյան, Ներսես Լամբրոնացի, Երևան, 1971, էջ 81:

² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 76:

³ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 469, Հայոց պատմություն, հատոր Բ, միջին դարեր, ակադեմիական հրատարակություն, Երևան, 2014, էջ 352:

⁴ Գ. Հակոբյան, նշվ. աշխ., էջ 79-80:

գործերը վարելու ու կարգավորելու պարտավորությունները, որոնց համար նա բազմիցս է ուղարկվել օտար երկրներ: Լամբրոնացին բազմաթիվ բարեկամների կողքին ունեցավ նաև սակավաթիվ, բայց ազդեցիկ թշնամիներ: Կաթոլիկ եկեղեցու հայրերը սիրով ու մեծարանքով են խոսել Ներսես Լամբրոնացու կյանքի և գործերի մասին, ինչն էլ որոշ հայ հոգևորականների հիմք է տվել Լամբրոնացուն հունադավան կամ կաթոլիկ հայտարարելու: Սանահինի և Հաղպատի նշանավոր վանահայրեր Գրիգոր Տուտեորդին և Դա-վիթ Քոբայրեցին Լևոն թագավորին ուղղված իրենց բողոքագրում խիստ քննադատեցին Լամբրոնացուն, նույնիսկ առաջարկեցին հեռացնել նրան պալատից և Տարսոնի առաջնորդությունից: Երկար խորհելուց հետո միայն, Լևոնը դիվանագիտորեն և շատ նուրբ ձևով արքունիքից ազատեց Ներսես Լամբրոնացուն՝ Արևելյան հայրերի համակրանքը շահելու համար: Արքան կանչեց պալատ Լամբրոնացու եղբորը՝ Հեթումին, և հանգամանորեն ամեն ինչ բացատրեց և հանձնարարեց նրան, որ հայտնի Լամբրոնացուն, թե վերջինս հեռացվում է արքունիքից՝ իր սխալ ընթացքի համար և արգելվում է այսուհետև Տարսոնի եկեղեցիներում որևէ բարեփոխություն կատարելը:

Ըստ Գ. Հակոբյանի Լամբրոնացին մեղադրանքներին պատասխան է գրում երկու օր հետո, երբ որոշ չափով խաղաղվում է: Հայտնի «Թուղթը» ըստ էության Լամբրոնացու պատասխանն էր Ձորագետի վանահայրերի գրած բողոքագրի և հերքումը, քանի որ Լևոն Մեծագործը անսպասելի կերպով ընդառաջել էր ձորագետցիներին¹:

Թղթի առաջին մասում Լամբրոնացին պնդում է անկողմնակալ քննություն անել, իսկ երկրորդ մասում հատ առ հատ անդրադառնում է բոլոր մեղադրանքներին: Թուղթը վերջանում է Լևոն Մեծագործին ուղղված մի քանի խորհուրդներով՝ համեմատական օրինակները քաղելով Ս. Գրքից: Ինչ վերաբերում է ձորագետցիներին, ապա նամակի վերջում հեզնում և ծաղրում է նրանց, որ փոխանակ երես առ երես արիաբար հանդես գալու, վիճելու, իրենց մտքերն ու գաղափարները պաշտպանելու փոխարեն, զբաղվում են զրպարտությամբ և բանսարկությամբ²: - Լամբրոնացին Լևոն Մեծագործին ուղղված նամակում գրում էր, թե ինքը կրոնական ծեսերի հարցերում այնքան է մեղավոր իր նորամուծություն-

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

ների, հոռմեական եկեղեցու հանդեպ իր հակվածության հարցերում, որքան հայոց տիրակալն իր մեծատոհմիկների և պալատականների համար եվրոպական տիտղոսների գործածման, պալատում ֆրանկների և սովորույթների ներդրման համար: Հավանաբար նմանատիպ համեմատությունն իր մեջ որոշակի ճշմարտություն էր պարունակում, քանի որ ինչպես նշում է Ա. Հովհաննիսյանը, նշյալ ժամանակաշրջանում Կիլիկյան Հայաստանում արևմտյան ազդեցությունը դրսևորվում էր ոչ միայն կրոնական ոլորտում, այլև կենցաղում և քաղաքական կյանքում¹:

Ի վերջո պետք է նշել, որ թեև տարիներ շարունակ Լևոն Մեծագործը և Ներսես Լամբրոնացին ունեցել են բարիդրացիական և գործնական հարաբերություններ և վերջինիս վստահվել է Կիլիկյան Հայաստանում պետական-քաղաքական համակարգի մի շարք կարևոր առաքելություններ, այնուամենայնիվ թագավորության հռչակումից կարճ ժամանակ անց երկկողմ հարաբերությունները սրվեցին, որի արդյունքում Ներսես Լամբրոնացին հեռացվեց Սսի արքունիքից, իսկ կարճ ժամանակ անց կնքեց իր մահկանացուն:

Բանալի բառեր: Կիլիկիա, թագավոր, Լևոն Մեծագործ: Ներսես Լամբրոնացի, եկեղեցի, բանակցություն, եպիսկոպոս, կաթողիկոս, պետություն, պարմիչ, պարմություն, հարաբերություն:

ОДИН ЭПИЗОД ИЗ ИСТОРИИ ВЗАИМООТНОШЕНИЙ ЛЕВОНА МЕЦАГОРЦА И НЕРСЕСА ЛАМБРОНАЦИ

Нелли Жамкочян

Ключевые слова: Киликия, король, Леон Мецагори, Нерсес Ламбронаци, церковь, переговоры, епископ, католикос, государство, историк, история, отношения.

Работа посвящена истории взаимоотношений двух известных деятелей армянского государства Киликии – Нерсеса Ламбронаци и Левона Мецагорца. Опираясь на сведения средневековых историков, а также на современную научную литературу, автор представляет ряд подробностей из взаимоотношений между этими политическими фигурами, в частности, интересную информацию о

¹ Ա. Հովհաննիսյան, Հայոց եկեղեցին կիլիկյան շրջանում, Երևան, 2018, էջ 101:

поездке Нерсеса Ламбронаци в Константинополь за короной Левона Мецагорца. В столице Византийской империи в борьбе с греческим духовенством Ламбронаци выходит победителем, не отклоняясь от доктрины Армянской церкви. В конце статьи представлен спор между Нерсесом Ламбронаци и восточными монахами. В результате армянский король Киликии Левон Метцагорц выгоняет Нерсеса Ламбронаци из Сиса, после чего и умирает Нерсес Ламбронаци, что становится большой потерей как для духовной, так и для политической жизни Киликийского Армянского королевства.

ONE EPISODE FROM THE HISTORY OF THE RELATIONSHIP BETWEEN LEVON THE GREAT AND NERSES LAMBRONATSI

Nelli Zhamkochyan

Key words: *Cilicia, the king, Levon Metsagorts, Nerses Lambronatsi, Church, negotiation, bishop, Catholicos, government, history, historian, relationship.*

This article is devoted to the history of relations between two famous figures of the Armenian state of Cilicia, Nerses Lambronatsi and Levon Metsagorts. Relying on a number of medieval historians, as well as on modern scientific literature, the author was able to present a number of details of the relationships between these figures, in particular, the interesting information about Nerses Lambronatsi's trip to the direction of Constantinople to bring the throne for Levon Metsagorts, as well as about his fight against the Greek clergy. In Byzantine Empire Nerses Lambronatsi won, and did not deviate from the doctrine of the Armenian Church.

In the end the article presented a dispute between Nerses Lambronatsi and Eastern monks. As a result, the Armenian king of Cilicia, Levon Metsagorts expelled Nerses Lambronatsi from Sis, after which Nerses Lambronatsi died, which was a great loss for the Cilician Armenian Kingdom.

Նելլի ժամկոչյան - ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի Աստվածաբանության ամբիոնի պլագ լաբորանտ

Нелли Жамкочан - ЕГУ Факультет Богословия, старший лаборант кафедры Богословия

Nelli Zhamkochyan - YSU Faculty of Theology, Senior Assistant of Chair of Theology